ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մինչև Թումանյանը մեզանում եղել էին գրական միություններ ստեղծելու բազմաթիվ փորձեր, որոնց նախաձեռնողներն էին Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Մ. Պեշիկթաշլյանը, Ռ. Պատկանյանը, Գր. Արծրունին։ Բայց միայն Թումանյանին հաջողվեց 1912 թ. հոկտեմբերին հիմնել սեփական կանոնադրությամբ, պաշտոնապես հաստատված գրողների և գրական գործիչների կազմակերպություն, որը հսկայական ազդեցություն ունեցավ հայ ամբողջ գրական պրոցեսի վրա։ Դա պայմանավորված էր թե՛ Թումանյան գործչի գրական-հասարակական շարժումներ ղեկավարելու տաղանդով և թե՛ ժամանակի պահանջով։

Մեր դարասկզբին առաջացել էր համազգային հզոր շարժում, որի նպատակը հայկական մշակույթի արժեքների վերհանումն ու նոր ազգային արվեստ ստեղծելն էր։ Այս խնդրի լուծմանը կարելի էր հասնել ժողովրդի ինքնաճանաչման և ինքնագիտակցության բարձրացման, ազգայինը արվեստում փնտրելու, գտնելու և այն հայ հասարակության մեջ տարածելու ճանապարհով։ Ընկերության երեկույթների բացման իր խոսքում Հ. Թումանյանը ասում էր. «Կխոսենք, կմտածենք, կխորհրդածենք, թե ո՞վ ենք մենք, ո՞ւրտեղից ենք գալիս, ո՞ւր ենք գնում, ի՞նչ ունենք... և ի՞նչ չունենք»[1]։ Թումանյանի շնորհիվ Հայ գրողների կովկասյան ընկերությունը հետագա ծանր տարիներին կարողացավ պահպանել գոյությունը և իր գործունեությամբ դարձավ նոր գրական շարժման կենտրոն։ Պատահական չէ, որ հենց Թումանյանը պիտի ղեկավարեր այդ ընկերությունը։ Նախ, գրական նոր շարժումը, որի արդյունքը ընկերության բացումն էր, մեծ չափով նախապատրաստել էր ինքը՝ Թումանյանը («Հինգշաբթիների»[2], «Վերնատան» պարապմունքներով)։ Երկրորդ՝ մեծ նշանակություն ուներ գրողի անհատական խառնվածքը։ Հայտնի է, որ մեր գրողներից ամենից շատ Թումանյանն էր սիրում իր մտորումները կիսել գրչակից ընկերների հետ, պատմել նրանց իր ստեղծագործական ծրագրերի մասին, հաշվի էր նստում ընթերցողի կարծիքի հետ։ Ստ. Զորյանի խոսքերով ասած՝ նա «գերազանցապես հասարակական խառնվածքի տեր մարդ էր»[3]։ Նույնն է վկայում նաև Դ. Դեմիրճյանը, ասելով՝ «Թումանյանը իր ժամանակի ամենահասարակական գրողն էր...

Անգամ ստեղծագործելիս նա կենդանի կապ ուներ ընթերցողի հետ... Կարելի է ասել, Թումանյանը ստեղծագործում էր հրապարակայնորեն, մի տեսակ կոլեկտիվ կերպով»[4]։

Ընկերության կարևոր նպատակներից մեկը տարբեր գրողների, գրողի և գրական քննադատության, գրականության և ժողովրդի միջև անմիջական կապի ստեղծումն էր։ Յուրաքանչյուր շաբաթ և հինգշաբթի տեղի ունեցող գրական երեկույթների և դասախոսությունների կազմակերպիչը հիմնականում Թումանյանն էր։ Բոլոր երեկույթները մշտապես ուղեկցվում էին գրական բա-

---

1 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1951, էջ 442։

2 Ա. Ինաիկյան, Հովհաննես Թումանյան, Կյանքի և ստեղծագործության պատմությունը, Երևան, 1969, էջ 412։

3 «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», Երևան, 1969, էջ 114։

4 Դ. Դեմիրճյան, Երկեր, հ. 8, Երևան, 1963, էջ 129։

նավեճերով և մեծ խանդավառություն ու «աննախընթաց եռուզեռ»[5] էին առաջացնում հասարակության մեջ։ «Եվ այդ ամբողջ եռուզեռի, ոգևորության շունչն ու հոգին անխոնջ եռանդով լի Թումանյանն էր»[6]։ Ընկերության հիմնական խնդիրը գրական նախորդների, հայ դասական գրականության արժեքների, անցյալի լավագույն ավանդների վերագնահատումն ու վերհանումն էր։ Վերջինս հնարավորություն կտար նպաստել նոր գրականության զարգացմանը։ Ինչպես գրում էր մամուլը՝ նկատի ունենալով ընկերության երեկույթների միայն առաջին տարեշրջանը, «Սկսված է մի վերագնահատության ընդարձակ շրջան, որթնանում է քննադատական միտքը, որ սրվելով գրական երևույթների գնահատության շրջանում չի դանդաղի անցնելու կյանքի մյուս ոլորտները և իր լույսը սփռելու մեր կյանքի բազմագան երևույթների վրա»[7]։ Այս ուղղությամբ ընկերությունը կազմակերպեց դասախոսություններ՝ նվիրված Լաֆֆուն, Սունդուկյանին, Ծերենցին, Դուրյանին, Նալբանդյանին, Պատկանյանին, Արովյանին։

Սայաթ-Նովայի արվեստի նկատմամբ Թիֆլիսի հայ և վրացի ողջ հասարակության մեջ արթնացած հսկայական հետաքրքրությունը արդյունք էր ընկերության՝ Սայաթ-Նովային նվիրած երեկույթների և դասախոսությունների։ Նախաձեռնողը դարձյալ Թումանյանն էր։ Առաջինը նա 1913 թ. մարտի 1-ի վարչության նիստում «հայտարարելով մեր նշանավոր բանաստեղծ Սայաթ-Նովայի նշանակությունը հայ գրականության համար՝ հայտնում է, որ վարչությունս որոշել է կազմակերպել գրական երեկույթ նրա հիշատակին ու մահարձան կանգնեցնել նրա գերեզմանի վրա «Կաթողիկե» եկեղեցու գավթում»[8]։ Ստեղծվում է մահարձանի բացման հատուկ մասնաժողով, որի կազմում էին Գեորգ Բաշինջաղյանը, Նվարդ Թումանյանը, Վահան Տերյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Արմեն Տիգրանյանը և ուրիշներ։ Միջնադարի բանաստեղծին նվիրված երեկույթների, նրա մահարձանի բացման, ձեռագրերի հրատարակման և տարածման, Սայաթ-Նովայի հետ կապված զանազան հարցերի շուրջ տարբեր բնույթի որոշումներ են կայացվել վարչության 23 նիստերում, նոյեմբերի 14-ի ընդհանուր ժողովում։ Դրանով պետք է բացատրել այն համընդհանուր խանդավառությունը, որն առաջացել էր ընկերության շուրջը։ Այդ ոգևորության արտահայտությունն էին նաև բազմաթիվ նվիրատվությունները, որ ստանում էր ընկերությունը։ Նվիրատուների թվում էին նաև Գեորգ Ախվերդյանի քույրն ու աղջիկը՝ Մանե և Աննա Ախվերդյանները։ Գ. Ախվերդյանի ժառանգներից է Հ. Թումանյանը ստանում Սայաթ-Նովայի ձեռագիր դավթարը։ Ինչպես իրավացիորեն նկատում է Տ. Կարապետյանը, «Հ. Թումանյանը և Վրաստանը» հոդվածում, սայաթնովագիտությունը շատ բանով է պարտական Հ. Թումանյանին։ Իրոք, Գեորգ Ախվերդյանից հետո որոշ իմաստով Թումանյանին պետք է համարել Սայաթ-Նովայի երկրորդ հայտնագործողը։ Մահարձանի բացումը տեղի ունեցավ 1914 թ. մայիսի 15-ին, որը անպատմելի ոգևորություն առաջացրեց Թիֆլիսի բազմագգ հասարակության մեջ։ Դրա լավագույն վկայությունն այն է, որ հիշյալ հանդեսը ավանդույթ դառնալով, շարունակվում է մինչև օրս «Վարդատոն» անվան տակ։ Այս անվանման հիմքում ընկած է Թումանյանի այն օրերին արված կոչը, որով նա առաջարկում էր վարդերի սիրահար աշուղին այցելել վարդերով։ Իոսեբ Գրիշաշվիլու խոստովանությամբ, Սայաթ-Նովայի այդ տոնակատարությունը ստիպեց նրան ձեռնամուխ լինել չորս տարվա աշխատանքի, որի արդյունքը եղավ Սայաթ-Նովա-

---

5 Վ. Ա ռ ա ր ո ն յ ա ն, Հ. Թումանյան, Մարդը և բանաստեղծը, Բոստոն, 1936, էջ 136։

6 Նույն տեղում։

7 «Հորիզոն», 13. II. 1913։

8 Ն. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Հայ գրողների կովկասյան ընկերության ֆոնդ, № 266։

9 «Թումանյան, ուսումնասիրություններ և հրապարակումներ», հ. I, Երևան, 1964, էջ 241։

յի ստեղծագործությունների վրացերեն հրատարակությունը և 1918 թ. առանձին գրքով Սայաթ-Նովայի մասին իր մենագրության լույս ընծայումը[10]։

Բացի Սայաթ-Նովային նվիրված երեկույթներից, ընկերությունը դասախոսություններ կազմակերպեց հին բանաստեղծության, մեր պատմիչների փիլիսոփայական աշխարհայացքի, Նարեկացու և հայ միջնադարի այլ հեղինակների ու հարցերի շուրջ։ Միջնադարը մինչ այդ այնպիսի մեծ ուշադրության չէր արժանացել, ինչպես ընկերության գործունեության տարիներին։ Սակայն վարչությանը և նրա նախագահին մտահոգում էր հայ գրականության արդի վիճակը և նրա ապագան։ Այդ ուղղությամբ ընկերությունը կազմակերպեց երեկույթներ ու դասախոսություններ՝ նվիրված Շանթին, արևմտահայ գրականությանը, Գ. Զոհրապին, Վ. Տերյանին, Ալ. Ծատուրյանին, Ա. Ջոպանյանին, Շիրվանզադեին, Ավ. Իսահակյանին, Սիամանթոյին ու Վարուժանին, հեթանոսական շարժմանը, հայ գրականության և մշակույթի ապագային նվիրված զանազան հարցերի։

Հայ գրողների կովկասյան ընկերության հիմնադրումից ընդամենը երկու ամիս անց՝ 1912 թ. դեկտեմբերի 30-ին, ստեղծվեց Հայոց երաժշտական ընկերությունը, որը լինելով ընդհանուր մշակութային շարժման արտահայտություն, չէր կարող նաև հայ գրողների ընկերության առաջացրած ընդհանուր ոգևորության արդյունք չլինել։ Ալ. Սպենդիարյանի հետ միասին Թումանյանը տարիներ շարունակ այս ընկերության պատվավոր անդամն էր։ Նա հիվանդության պատճառով չմասնակցեց ընկերության բացման արարողությանը, բայց իր լիասիրտ շնորհավորանքներն ուղարկեց բաց նամակով, որում ասվում էր. «Բարով է գալիս Գրական ընկերության հրաշալի քույրը»[11]։ Նույնի ազդեցությանն ու Թումանյանի ջանքերին պետք է վերագրել 1914 թ. մարտի 19-ին Հայոց պատմական և հնագիտական ընկերության բացումը։

Բայց հայ գրողների միությունը մինչ ընդհանուր ազգային-մշակութային շարժմանը նպաստելը դարձավ համահայկական գրական շարժման կենտրոն, որն իբրև «մայր ընկերություն» ղեկավարում էր Երևանում, Աշտարակում, Գորիսում, Աստրախանում, Գորիում, Բաքվում և այլուր ստեղծված գրական խմբակները։ Ինչպես վկայում է Ե. Ֆրանգյանը, «գրական ուշագրավ շարժմանը ստոն և կենդանություն տվողը Հայ գրողների ընկերությունն է, որը շատ կարճ ժամանակամիջոցում այնքան հռչակ ստացավ»[12]։

1912 թ. նոյեմբերի 12-ին Բաքվի մարդասիրական ընկերության շենքում հայ գրողների ժողովը ողջունեց Թիֆլիսի հայ գրողների կովկասյան ընկերությանը։ Ներկաներից շատերը առաջարկեցին դիմել Թումանյանին Բաքվում հիմնելու Հայ գրողների կովկասյան ընկերության մասնաճյուղ կամ գործակալություն։ Ձայների մեծամասնությամբ ընդունվեց վերջին առաջարկը։ Բաքվում ստեղծված գրական աշխուժության մասին կարդում ենք Ցոլակ Խանզադյանի 1913 թ. փետրվարի 16-ի նամակում. «Վերջերս այստեղ մեծ հետաքրքրություն է առաջ եկել դեպի հայկական կյանքն ու գրականությունը։ Անսիրտ կարելի է պնդել, որ այստեղի նեխած մթնոլորտը շարժման մեջ է. կուլտուրական վերածնության շրջանի նախօրյակին ենք... Եթե հարկավոր է, մենք կարող ենք նույնիսկ այդ ֆիրմայի (Հ. Դ. Կ. Ը.) տակ դուրս գալ,—այդ դաղափարը հասարակության մեջ արծարծելու նպատակով։ Կարող ենք ասել, որ դասախոսներին տալիս է Հայ գրողների ընկերության տեղական ճյուղը, այդ մասին կարող ենք ասել և առանց պաշտոնական թույլտվություն ունենալու»[13]։

Հայ գրողների կովկասյան ընկերության վարչության 1913 թ. հունվարի 13-ի նիստում առաջարկություն է արվում փոփոխել կանոնադրությունը և ձգտել իրավունք ստանալ գավառներում ճյուղեր բանալու։ Սակայն Թուման-

---

10 «Թումանյանը ժամանակակիցների հուշերում», էջ 662։

11 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1945, էջ 382։

12 «Հորիզոն», 9. XII. 1915։

13 ԳԱԹ, Թումանյանի ֆոնդ, № 49։

յանը տեսնելով, որ հարցը կարող է գրականորեն չլուծվել, առաջարկում է Բաքվի, հետագայում նաև Երևանի, գրասերներին կապ պահպանել Թիֆլիսի ընկերության հետ. «Կարծում եմ լավ կլիներ,— գրում է նա,— եթե հավաքվենք և կազմենք մի գրական շրջան, սկսենք գործել, ունենալ գրական ելույթներ և ինչ որ կարող ենք, մինչև կկարողանայինք իրավունք ստանալ բաժանմունք ունենալու»[14]։ Այս մասին Թումանյանը գրում է Յ. Խանզադյանին, Հ. Մանանգյանին, զրուցում է Ռ. Օհանջանյանի հետ։ Դ. Անանունը և Բաքվի գրական ընկերության մյուս նախաձեռնողները՝ Հովհ. Հովհաննիսյանը, Տ. Հովհաննիսյանը և ուրիշներ Թումանյանի խորհուրդը համարում են «անպայման նպատակահարմար և իրագործելի»[15]։ «Պիտի ասեմ,— գրում է Դ. Անանունը Թումանյանին 1913 թ. մարտի 3-ին,— որ անցյալ տարվա դեկտեմբերից սրգեն այդպիսի համախմբումներ ունենք։ Հայ գրական ընկերությանը անդամագրվելու շուրջը տեղի ունեցած ժողովները խթան եղան, որ այստեղ հրապարակ գա մի ինքնուրույն գիտական-գեղարվեստական ընկերություն հիմնելու խնդիրը»[16]։ Եվ դարձյալ Թումանյանն առաջինն է շտապում ողջունել հայ գրասերների այդ նախաձեռնությունը՝ «Բաքվի ձայն» թերթի միջոցով. «Շատ լավ տպավորություն է անում էստեղ էդտեղի նոր գրական շարժումը»[17]։

Բաքվի գրասերներին հաջողվում է ընկերություն ստեղծել 1915 թ.[18]։ Այն իր գոյության ողջ ընթացքում մշտական ու սերտ կապերի մեջ էր Հայ գրողների կովկասյան ընկերության հետ։

Հայության տարբեր հատվածներում առաջացած գրական միավորումները միմյանց հետ կապ պաշտպանում էին Հայ գրողների կովկասյան ընկերության միջոցով։ Հաճախ նույն շրջանում Թիֆլիսում, Պոլսում, Երևանում, Բաքվում ընթերցվում էին նույն թեմաներով դասախոսություններ։ Գրական նախասիրությունների և հետաքրքրությունների ընդհանրությունը դարձյալ մեծ չափով պայմանավորվում էր Հայ գրողների կովկասյան ընկերության գործունեությամբ և առաջացրած արձագանքներով։ Այս հարցում ևս մեծ էր ընկերության նախագահի դերը։ Թումանյանը ձեռնարկելով հայ գրականության կուրսեր բացել Թիֆլիսում, դիմում է Բաքվի Հայ գրասերների միության նախագահ Տիգրան Հովհաննիսյանին. «Արդյոք չի՞ կարելի, որ միանանք մենք ու Գրասերների ընկերությունը—երկու սեմեստր, և էստեղ պահենք և էդտեղ... Միասին հեշտ կպահենք և ավելի ուժեղ»[19]։

Թումանյանի նախագահած ընկերության շնորհիվ հայ գրականության նկատմամբ հսկայական հետաքրքրություն առաջացավ նաև բուն հայրենիքում։ Մարգար Ավետիսյանի՝ Թումանյանին ուղղած նամակից տեղեկանում ենք, որ 1914 թ. փետրվարի 2-ին Երևանում տեղի է ունեցել խորհրդակցություն տեղում գրական միավորում հիմնելու կապակցությամբ։ Նա գրում է. «Այստեղ մի քանի գրողների և շատ գիտնականների մեջ փափագ է զարթնել

---

14 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 385։

15 ԴԱԹ, Թումանյանի ֆոնդ, № 242։

16 Նույն տեղում։

17 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 387։

18 1915 թ. մայիսի 27-ի վարչության նիստում Հ. Թումանյանը հայտնում է, որ Բաքվի Հայ գրասերների միության մայիսի 28-ի հիմնադիր ժողովին մասնակցելու հրավեր է ստացվել։ Վերջինս ուղարկել է նորընտիր միության նախագահ Տիգրան Հովհաննիսյանը։ Նա ընկերության հասցեով հղված պաշտոնական նամակին կցել է կանոնադրության մի օրինակ։ Եվ, իրոք, 1915 թ. մայիսի 28-ին Բաքվում, ի վերջո, Հովհաննես Հովհաննիսյանի, Սառա Սաղյանի, Կատարինե Բաշաճուրի, Աստվածատուր Վաչյանի, Երվանդ Թաղիանոսյանի և Մխիթար Տեր-Անդրեասյանի ջանքերով հիմնվում է Հայ գրասերների միությունը։ Այս անվանումն իսկ հուշում է, որ ընկերությունը ոչ թե գրողների, այլ գրականությունը սիրողների խմբավորում էր։ Վերջինս իրավունք ուներ կազմակերպել դասախոսություններ, գրական զրույցներ, թոշակ տալ կարիքավոր գրողներին և այլն։

19 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 414։

ստեղծելու մի գրական մթնոլորտ, հետաքրքրվելու հայ գրական կյանքով և սերտ շփումն հաստատելու հայ գրական կենտրոնի հետ. նրանից թարմություն ու ոգեորություն ստանալու համար»[20]։ Երևանի գրասերները ևս ձգտում էին հետաքրքրություն արթնացնել հայ գրական կյանքի նկատմամբ, դասախոսություններ կազմակերպել և այլն։ «Այդ նպատակին հասնելու համար ամենահարմար միջոցը համարվեց տեղում հիմնել Հայ գրողների ընկերության ճյուղ և հանձնարարվեց ինձ գրել և ուղղություն ստանալ, թե արդյոք մենք ըստ կանոնագրության իրավունք ունե՞նք ճյուղ հիմնելու և երկրորդ՝ ինչ հիմունքներով...»,— գրում է Մ. Ավետիսյանը[21]։ Իհարկե, նրանք կարող էին հիմնել և անկախ գրասիրաց ընկերություն, բայց նպատակահարմար էին գտնում հիմնել ճյուղ, քանի որ փափագում էին վայելել Թիֆլիսի «Գրական ընկերության զորեղ հովանավորությունը»[22], որպեսզի ունենան «հեղինակավոր դիրք ու հարատև կյանք»[23]։ Թումանյանը պատասխանում է, որ ճյուղեր ունենալու իրավունք դեռ չի ստացվել և խորհուրդ է տալիս կազմակերպել անկախ գրասերների ընկերություն Երևանում։ Ընդ որում, Թումանյանը, գրողներին տարաշխարհիկ և բնաշխարհիկ խմբերի բաժանող քննադատը, Երևանում առաջացած գրական շարժմանը ավելի մեծ նշանակություն էր տալիս, քան հայրենիքի սահմաններից դուրս ապգային-մշակութային շարժմանը, թեև դարասկզբին հայ գրականությունը շարունակում էր զարգանալ հիմնականում գաղթօջախներում։ Մ. Ավետիսյանին ուղղած նամակում Թումանյանը գրում է. «Քեզ պետք է ասեմ, որ ես ուրիշ կարծիքի եմ Երևանի մասին... Մեծ, շատ մեծ կարևորություն ունի մեր բնիկ քաղաքներում ամեն մի էդ տեսակ կուլտուրական ձեռնարկություն։

Ցնծագին պետք է ողջունենք էստեղից ձեր գրասիրաց ընկերության բացումը»[24]։

Հ. Թումանյանի ընտանեկան արխիվում է գտնվում Երևանից Նվարդ Թումանյանին ուղղված Պողոս Մակինցյանի նամակը, որում ասվում է. «Մենք մի փոքրիկ ընկերություն ենք կազմել այստեղ հայոց գրականությունը սիրողների։ Առայժմ ուրիշ մի ընկերության գրոշակի տակ ենք գործում, բայց հենց որ Թիֆլիս կամ Բաքու ընկերության ճյուղեր բաց անելու իրավունք ձեռք բերենք—մենք կդառնանք ճյուղ»[25]։ Այս նամակը, որն հրապարակվում է առաջին անգամ, վկայում է նաև, որ Երևանի գրական խմբակը Նիկոլ Աղբալյանին լիազորել էր համոզել Թումանյանին դասախոսություն կարդալ Երևանում «հենց ասենք լեզվի մասին»[26]։ Երևանի գրական խմբակի ջանքերով 1916 թ. նոյեմբերի 3-ին և 9-ին Երևանում ստեղծվեց գրասերների միություն, որի նպատակն էր կապ պահպանել «թրքահայ ցաք ու ցրիվ գրողների հետ, հավաքել թրքահայ գրականության բեկորները»[27], վերականգնել գրական ասուլիսները։ Այս միությունը նույնպես սերտ կապերի մեջ մտավ Հայ գրողների կովկասյան ընկերության հետ։ 1916 թ. դեկտեմբերի 10-ին և 18-ին նրանց ներկայացուցիչները մասնակցում էին Թումանյանի ղեկավարած վարչության նիստերին, որոնցում քննվում էին կառավարության՝ Հայ գրողների ընկերություններ տրամադրած 10 000 ռուբլի գումարի տնօրինման, արևմտահայ մտավորականության մեջ բաշխելու խնդիրը[28]։

---

20 ԳԱԲ, Թումանյանի ֆոնդ, № 2/5։

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում։

24 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. Ե, էջ 397։

25 Կամակը մեզ տրամադրել է բանաստեղծի դուստրը՝ Թամար Թումանյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում։

26 Նույն տեղում։

27 «Հորիզոն», 7. XI, 1916։

28 ԳԱԲ. Հայ գրողների կովկասյան ընկերության ֆոնդ, № 45/13, 45/16։

Հայկական դպրոցների ուսուցիչների նախաձեռնությամբ նույն ժամանակաշրջանում Հայ դրասիրաց ընկերություն ստեղծվեց նաև Աշտարակում։ Առաջինը, ում դիմեց ընկերությունը, դարձյալ Թիֆլիսի գրողների միությունն էր։ Գառնիկ Գյուղալյանի 1917 թ. փետրվարի 19-ի նամակից պարզվում է, որ Հ. Թումանյանը 1916 թ. դեկտեմբերի նամակով շնորհավորել և ողջունել է Աշտարակի դրասիրաց ընկերության բացումը[29]։

Ալեքսանդրապոլում գործող «Ալագյազի դավակունք» ընկերությունը բացառություն չէր կազմում։ Նրա համար նույնպես կենտրոնը «մայր ընկերությունն էր»[30]։

Գրեթե չկար հայ գաղթօջախ, որտեղ չստեղծվեր գրական թեկուզ շատ փոքր իումբ և անմիջապես կապ չհաստատեր Հայ գրողների կովկասյան ընկերության հետ։ Նոր Նախիջևանի հայկական կոմիտեի գրական-գեղարվեստական բաժնի նախագահ Հակոբ Խաչատրյանը, կոմիտեի լիազորությամբ, 1917 թ. հունվարի 20-ին դիմում է «մայր ընկերության» նախագահ Թումանյանին և հրավիրում նրան Ռոստովում ու Նախիջևանում դասախոսություն կարդալ՝ «նվիրված հայկական կյանքին (բառի ամենալայն իմաստով)»[31]։ Հակոբ Սառիկյանին ուղղված Հ. Թումանյանի նամակը վկայում է, որ նա 1917 թ. հոկտեմբերին պատրաստվել է Պյատիգորսկից գնալ նոր Նախիջևան Հայ գրողների ընկերության ճյուղ բանալու և Մ. Նալբանդյանի արխիվը տեղափոխելու նպատակով, բայց հանգամանքների բերումով շտապ Թիֆլիս է վերադարձել[32]։ 1915 թվականից հայ գրական փոքրիկ խմբակ էր գործում նաև Աստրախանում, որտեղ Մեսրոպ եպիսկոպոսը դասախոսություն կարդալուց հետո առաջարկում է գոյացած «գումարների մի մասը ուղարկել Թիֆլիսի «մայր ընկերությանը»[33]։

«Մայր ընկերության» աղդեցությամբ Գորիսում և Գորիում նույնպես առաջացան գրական փոքրիկ խմբակցություններ։ Գորու հայ գրասերների խմբակի 1916 թ. 12-րդ հեթական երեկույթը նվիրված էր Հ. Թումանյանին։ Նրանք երեկույթներ էին նվիրել նաև Ռ. Պատկանյանին, Ա. Ահարոնյանին, Մուրացանի «Նոյի ագռավին», Սայաթ-Նովային, Նար-Դոսին, Շիրվանզադեին, Մ. Նալբանդյանին և այլն։ Գրական այսպիսի մեծ, համազգային աշխուժության առաջացումը պետք է վերագրել նաև Հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթների գրական-գեղարվեստական և գիտական բարձր մակարդակին։ Բերենք միայն մի օրինակ և պարզ կդառնա, թե վարչության, ավելի շուտ՝ Թումանյանի կազմակերպած դասախոսությունները, ինչպիսի աղդեցություն ունեին և պատահական չի թվա, որ մի ընկերության առաջացումը կարող էր այսպիսի լայն մշակութային շարժում առաջացնել ամբողջ հայ իրականության մեջ։ 1913 թ. հունվարի 20-ի վարչության նիստում Ա. Աթանասյանը առաջարկեց ընկերության հեթական երեկույթը նվիրել Շանթի «Հին աստվածներ» պիեսին, բայց դասախոսության փոխարեն կազմակերպել դատ։ Վերջինս կայացավ 1913 թ. փետրվարի 3-ին։ Դատի նախագահն էր Տ. Հովհաննիսյանը, դատավորներն էին Ա. Աթանասյանը, Հ. Ամիրյանը, իսկ Հ. Թումանյանը, Լեոն, Ա. Զարդարյանը, Մ. Թումանյանը և ուրիշներ երդվյալ ատենակալներ էին։ Մեղադրողներն էին Մ. Մատենճյանը, Ա. Հարությունյանը, իսկ պաշտպաններ՝ Գ. Իփեկյանը և Ստ. Լիսիցյանը։ Իհարկե, կարելի է ենթադրել, որ երդվյալ ատենակալների որոշումներում ինչ որ չափով պետք է արտահայտություն գտներ նաև Թումանյանի կարծիքը Շանթի այդ գործի մասին։ Բայց հարցին պետք է մոտենալ նաև որոշ վերապահությամբ։ Պետք է նկատի ունենալ, որ ատենակալների որոշումները կայացվում են մեղադրյալների և դատապաշտպանների ճառերի արտահայտած դրույթների հիման վրա և այդ սահմաններում, ուստի ատենակալների որոշումները չեն կարող Թու-

29 Նույն տեղում, Թումանյանի ֆոնդ, № 522։

30 Նույն տեղում, № 292։

31 Նույն տեղում, № 348։

32 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 432։

33 ԳԱԹ, Թումանյանի ֆոնդ, № 399։

մանյանի անձնական կարծիքի անմիջական և ամբողջական դրսևորումը լինել քննվող երկի մասին։ Ինչևէ, բերենք ատենակալների որոշումները.

1. «Հին աստվածները» դրամա չէ, այլ դրամատիկական պոեմ։

2. Վանահայրը մեղավոր չէ, բայց վնասակար մտքեր է քարոզում, մեղավոր չէ այն պատճառաբանությամբ, որ յուրաքանչյուր ոք ազատ է ցանկացած գաղափարը քարոզել։

Նույն պատասխանը Աբեղայի վերաբերմամբ։

3. Իշխանուհին, որ ամուսնացել է չսիրած մարդու հետ, նույնպես մեղավոր չէ, որովհետև հայ աշխարհի սովորության համեմատ, հավանորեն, նրան ամուսնացրած կլինեն անչափահաս հասակում։

4. Շանթի երկը դրամա չէ, բայց արժեքավոր է։

5. Պիեսը տիպեր չի տալիս։

6. Նա խորհել է տալիս, բայց չի հուզում։

Վերջինս չէր կարող Թումանյանի տեսակետը լինել Շանթի երկի մասին, քանի որ նա մեծ նշանակություն էր տալիս ստեղծագործության հուզական բովանդակությանը։

Դատից անմիջապես հետո եղան դժգոհություններ, որոնք արտահայտվեցին մամուլում և թերթերի խմբագրություններին ուղղված բողոք-նամակների մեջ, որոնցում հեղինակները, նկատի ունենալով մեղադրողների՝ Ա. Հարությունյանի և Մ. Մատենճյանի ելույթներն ու պաշտպաններ Ստ. Լիսիցյանի և Գ. Իփեկյանի պատասխանները, գտնում էին, որ «դատը դարձավ վրդովվեցուցիչ ու անպատվաբեր թե՛ իրեն՝ Գրական ընկերության և թե՛ մանավանդ Շանթի համար»[34]։ Ի պատասխան այդ բողոքողների, Թումանյանը գրում է «Անտեղի ու անպետք միջոց» հոդվածը, որի զգալի մասը գրողի հրատարակություններում առայժմ տեղ չի գտել։ Այս հոդվածից նախ պարզ է դառնում, որ «թե՛ դատախազներից և թե՛ պաշտպաններից յուրաքանչյուրը ինքն է ընտրել իր դերը»։ «Դատից հետո,— ասում է Թումանյանը,— ես պատահեցի էն տեսակ վրդովված մարդկանց, որոնք կարծում էին, թե Շանթի դրաման դրամատիկական պոեմ անվանելով, դատավորները նվաստացրել են նրա գործը և եթե մեջը տիպեր չեն գտել, դրանով էլ տապալել են միանգամայն։

Ես կնշանակի գրականությունից և նրա Ֆաուստներից կամ Մանֆրեդներից հասկացողություն չունենալ միանգամայն։ Եվ ես տեսակ հարգանքն ու սերը չեն ուրախացնիլ գրողին։ ...Հավատացնում եմ ինը հարգելի գրասերներին, որ իմ տեսակետն էլ բոլորովին տարբեր է եղածներից։ Ես ո՛չ արվեստի ու իր՝ օրենքների, ո՛չ անցյալ գրական երկերի օրինակով եմ մոտենում դրական գործին, ո՛չ էլ նրա հասարակական ու գաղափարական արժեքների տեսակետից, այլ ամենից առաջ ուզում եմ ճշտել, գտնել, թե արդյոք նրա մեջ կա՞ ստեղծագործողի կենդանի շունչը, էն որ ամենայն իրավամբ կոչվում է աստվածային, որովհետև նա է միայն, որ գրական արտադրությանը տալիս է մեծության ու անմահության հատկություն։

Մնացածը և՛ արվեստ, և՛ փիլիսոփայություն, և՛ հասարակական դաղափար, և՛ բարոյագիտություն բոլորը գալիս են նրանից հետո։ Եթե էն չկա, պրծանք։ Էլ ոչ մի արվեստ, ոչ մի հասարակական միտք, ոչ մի մեծ գաղափար օգնել չեն կարող։

Ահա դատավորների ու նրանց դեմ բողոքողների վերաբերմունքից տարբեր մի վերաբերմունք, և սակայն ոչ թե դատի համար չեմ դատապարտում Հայ գրողների ընկերությանը, այլև նրա վարչության նախագահն եմ, որքան էլ տարբեր կարծիքներ հայտնվեն նրա հարկի տակ»[35]։

Այս հոդվածում Թումանյանը ներկայանում է որպես տաղանդավոր քննադատ, որպես գրաքննադատության հանճարեղ տեսաբան, ազատ, բայց գիտական քննադատության կողմնակից, իբրև դեմոկրատ անձնավորություն։

---

[34] «Հորիզոն», 6. II. 1913։

[35] Նույն տեղում, 7. II. 1913։

Այստեղ Թումանյանը բանաձևում է գրական երկը վերլուծելու, գնահատելու հետաքրքիր և կարևոր չափանիշներ։ Առաջացած մեծ աշխուժությունը գրական ընկերությանը ստիպեց փետրվարի 7-ին նոր երեկույթ կազմակերպել նվիրված Շանթի «Հին աստվածներին», այս անգամ «Դատից հետո» անվան տակ։ Ելույթ ունեցան 16 հոգի, այդ թվում Դ. Դեմիրճյանը, Ն. Աղբալյանը, Լեոն։ Տ. Հովհաննիսյանը ընդգծեց. «Գրական երկի արժանիքը կախված չէ այն բանից, թե նա ինչ շկոլայի է պատկանում։ Նույնպես պակասություն չէ նրա համար, թեկուզ որպես դրամայի նրա մեջ արտահայտվող սուբյեկտիվիզմը»։ Այդ օրվա հանդիսականներից մեկը պահանջում էր դատի ենթարկել գրական ընկերության վարչությանը, որ «նա գրական դատ կազմակերպելով Շանթի պիեսի վրա, նրան կամա թե ակամա նվաստացրել է, մարգարիտը ցեխի մեջ է գցել»։ Նրանց պատասխանում է վարչության նախագահ Հ. Թումանյանը հետևյալ խոսքերով. «Գրական ընկերության նպատակներից մեկն էլ այն է, որ նա խիստ, բայց անաչառ քննադատության ենթարկե հայ գրական աշխարհում հանդես եկող գրողներին և նրանց երկերը։ Թող դրանք պաշտպանվեն, եթե արժանիք ունեն իրենց մեջ»[36]։

Երեկույթից անմիջապես հետո մամուլում հրապարակվեցին բազմաթիվ հոդվածներ։ Նշենք դրանցից մի քանիսը միայն. Ա. Աթանասյան, «Թե ինչ նստեց Շանթը ինձ վրա», «Մի շանթիստի հիշատակարանից»[37] ֆելիետոններ, Հ. Սուրխաթյան, «Գրական դատ»[38], Ստ. Մալխասյան, «Դարձյալ «Հին աստվածների» մասին»[39], Ֆլորա Վարդանյան, «Կրկին «Հին աստվածներ» դրամայի շուրջը»[40], ինչպես նաև բազմաթիվ առաջնորդողներ ու հաղորդումներ՝ «Գրական հետաքրքրությունը», Հ. Տեր Միրաքյան, «Գրական դատը»[41], «Դատից հետո»[42], Հ. Թումանյանի «Անտեղի ու անպետք միջոց»[43] հոդվածը, «Բաց նամակ Լ. Շանթին»[44] և այլն։

Շանթի «Հին աստվածների» նկատմամբ Հայ գրողների կովկասյան ընկերության առաջացրած համընդհանուր հետաքրքրությունը հասավ Բաքու, մինչև Պոլիս, ինչպես գրում է Ե. Ֆրանգյանը. «Ամբողջ մի շանթյան շրջան ստեղծվեց Թիֆլիսում, ինչպես և Կովկասի այլ քաղաքներում»[45]։ Բաքվում փետրվարի 24-ին և 28-ին տեղի ունեցան դասախոսություններ՝ նվիրված Շանթի «Հին աստվածներին»։ Ընդ որում, դասախոսներից էր Գասպար Իփեկյանը՝ Թիֆլիսի փետրվարի 3-ի դրական դատի պաշտպաններից մեկը։ Պոլսում Էսայան սանուց միությունը կազմակերպեց «գրական համախմբություն», որի նյութը դարձյալ Շանթի «Հին աստվածներն» էր։ Իր բացման խոսքում Հ. Սիրունին ասաց. «Նմանօրինակ համախմբումներ պիտի տեղի ունենան նվիրված զանազան թրքահայ գրողներու—Զոհրապի, Վարուժանի, Զարդարյանի, Սիամանթոյի, Զապել Եսայանի մասին»։ Այդ օրը Գ. Խաժակը ընդգծեց և հույս հայտնեց, որ. «Գրական այս հետաքրքրության ալիքը, որ Կովկասեն կուգա, հետզհետե տարածվի»։ Ատենակալների ու դատավորների փոխարեն այստեղ կազմվել էր ժյուրի, որի անդամներն էին Կոմիտասը, Գ. Զոհրապը, Ռ. Զարդարյանը, Դ. Վարուժանը, Սիամանթոն և ուրիշներ։ Ռուբեն Զարդարյանը «շատ գնահատելի գտնելով կատարված ձեռնարկը, մաղթեց, որ երևույթը ավելի արծարծվի և այս հավաքույթներես շարքեն ծնունդ առնի Թրքահայ գրա-

---

36 Նույն տեղում, 9. II. 1913։
37 Նույն տեղում, 10. II. 1913։
38 «Մշակ», 6. II. 1913։
39 Նույն տեղում, 7. II. 1913։
40 Նույն տեղում, 20. II. 1913։
41 «Հորիզոն», 13. II. 1913։
42 Նույն տեղում, 9. II. 1913։
43 Նույն տեղում, 7. II. 1913։
44 Նույն տեղում, 17. II. 1913։
45 Նույն տեղում, 9. XII. 1915։

կան միությունը»[46]։ Եվ իրոք, Թումանյանի նախագահած Հայ գրողների կովկասյան ընկերության առաջացրած ոգևորության շնորհիվ այդ շրջանից Պոլսում գրվում է գրական ասուլիսների հիմքը։ Եթե առաջին ասուլիսը Շանթի մասին էր, ապա երկրորդը էսայան սանուց միությունը նվիրեց Գ. Զոհրապին։ Այս առթիվ գրված գրախոսականում Ն. Ադրալյանը արձանագրում է. «Մեր ընթերցողներին հայտնի է Շանթի «Հին աստվածներին» խանդավառ ընդունելությունը Թիֆլիսում առիթ դարձավ, որ Պոլսում ևս ուշադրություն դարձնեն նրան։ Եվ այստեղ կազմակերպված գրական հանդեսների նման, որի նախաձեռնողը եղավ Հայոց գրողների ընկերությունը, Պոլսում ևս կազմակերպվեն գրական ասուլիսներ»[47]։ «Եվ չպետք է զարմանալ,— կարդում ենք ժամանակի մամուլում,— որ հազիվ խանձարուրից դուրս եկած՝ նա (ընկերությունը) մի շարժում մտցրեց ոչ միայն մեր հարևան Բաքվում, այլև շատ ավելի հեռու վայրերում, սահմանի այն կողմը՝ Պոլսում։ Ամենքը զգում են... որ կազմակերպվում է հայոց մտավորական դասը... մանավանդ մնացած ուժերով մի համազգային գործ կատարելու, որի բնույթն ու չափերը դժվար է նախորոշել...»։ Ընդգծելով ընկերության գործունեության անհրաժեշտությունն ու նշանակությունը, գրականության դերը, վերոնշյալ հոդվածի հեղինակը շարունակում է. «Հայոց ընկերությունը դառնում է ազգային ինքնագիտակցության մի կենդանի գործոն, որքանով մի ազգի ոգին արտացոլվում է նույն ազգի գրականության մեջ և ինքնագիտակցության կարելի է հասնել նույն այդ գրականությունը ճանաչելով և գնահատելով։

Գրական ընկերությունը կոչված է առաջին պաշտպանը դառնալու հայոց գրականության և հայ գրականի, բարձրացնելու հայ մտքի և զգացումի հեղինակությունը մեր շրջապատում։ Նա դառնալու է մի մտերիմ ու հարազատ օջախ, ուր ամեն անգամ կարող է մտնել անբռնազբոս՝ ինչպես իր տունը... Գրական ընկերության նպատակը նյութականից առաջ բարոյական է և քաղաքական, և արդեն հայ գրչի և գրականության բարոյական հեղինակությունը բարձրացնելու համար է, որ ձեռնարկված է գրական մշակների նյութական բարվոքումին»[48]։

Հ. Թումանյանի անձը, նրա ցանկացած նախաձեռնությունը չէր կարող անարձագանք մնալ։ Բնականաբար, Թումանյան-անձի հմայքը, հասարակական գործունեությամբ խանդավառվելու հատկությունը չէր կարող չտարածվել իր շրջապատի և առաջին հերթին իր ընտանիքի անդամների վրա։ Դեռ բանաստեղծի կենդանության օրոք նրա զավակները սկսեցին իրենց հասարակական հանրօգուտ գործունեությունը։ Հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթներին, դասախոսություններին և դրանց շուրջ ծագած գրական բանավեճերին ու քննարկումներին մասնակցում էր Նվարդ Թումանյանը։ 1914 թ. մարտի 27-ին «Հայ կնոջ դերը գրականության մեջ» թեմայով ընկերության 31-րդ երեկույթին իր հայրիկի հետ միասին ելույթ է ունենում նաև դուստրը։ Միաժամանակ Նվարդ Թումանյանը ղեկավարում է երկու հասարակական կազմակերպություն։ Նա Հայ օրիորդաց և Հայ ուսանողների կուլտուրական միության նախագահն էր։ Վերջինս հիմնվել է 1917 թ. նոյեմբերի 26-ին։ Նրա նպատակն էր Թիֆլիսի հայ ուսանողներին ծանոթացնել գլխավորապես հայ և ընդհանուր կյանքի հասարակական, տնտեսական և քաղաքական դրության հետ, ուսումնասիրել հայ լեզուն, գրականությունը, պատմությունը, հարաբերության մեջ մտնել նույն նպատակով ստեղծված այլ ազգությունների ուսանողական կազմակերպությունների հետ։ Նվարդ Թումանյանի արխիվում պահպանվել են այդ միությունների վարչության արձանագրությունները, որոնցից տեղեկանում ենք, որ նա աշխատել է հիմնել նաև հայ գրականությունն ու գեղարվեստը ուսումնասիրող ընկերություն։

---

46 Նույն տեղում, 19. III. 1913։

47 Նույն տեղում, 5. V. 1913։

48 Նույն տեղում, 28. III. 1913։

Այսպես, Թումանյանի նախագահած ընկերությունն իր ստեղծումով և գործունեությամբ հսկայական աշխուժություն առաջացրեց ողջ հայ իրականության մեջ։ Միայն Թումանյանի պես հանճարեղ մտածողն ու գրական-հասարակական գործիչը, հարազատ ժողովրդի մեծ նվիրյալը կարող էր իրարից հազարավոր կիլոմետրերով հեռու գտնվող հայության տարբեր հատվածներում առաջ բերել գրական միևնույն մթնոլորտը, երկփեղկված ժողովրդի բեկորները միացնել մշակութային հզոր կապով։ Մեծ նշանակություն տալով միասնական հայ ազգային գրականություն ունենալու և այն ընդհանուր ուժերով զարգացնելու հարցին, Թումանյանը գրում էր. «Ամեն քաղաքից էլ, որ ձեն ձենի տանք—դուրս կգա մի մեծ ձեն, հայ ժողովրդի ձենը։ Սրանից լավ էլ ի՞նչ կարող ենք անել»[49]։ Եվ Թումանյանին հաջողվեց լսել հարազատ ժողովրդի նրվիրական ձայնը, հանուն որի նա չխնայեց ոչինչ, իր շատ թանկ ժամանակը, որի ընթացքում այնքան գլուխգործոցներ կարող էին ստեղծվել։ Որպես նախագահ Թումանյանը արտակարգ որևորված էր իր ընկերության աշխատանքներով, քանի որ կարողացել էր ստեղծել «մեր երկիրը, մեր ժողովուրդը, մեր գրականությունը լուրջ ուսումնասիրելու»[50] հնարավորություն։ Հարազատներին նամակներ գրելիս երբեք չէր մոռանում նրանց տեղյակ պահել գրողների ընկերության գործերին։ Որդուն՝ Արտավազդին, գրում է. «Մեր գրական երեկույթներն էլ շատ լավ են գնում։ Դահլիճը մեծացրել են, ավելի լավ ու մեծ բեմ են շինել, և ժողովուրդը միշտ էնպես է լիքը, որ նստելու տեղ չի լինում»[51]։ Մարգար Ավետիսյանին ուղղված նամակում կարդում ենք. «Չես կարող երևակայել, թե ժողովուրդ, ինտելիգենցիա և երիտասարդություն, և աշակերտություն ինչ հոսանք է առել դեպի ընկերությունը»[52]։ Ահա ինչով էր ուրախանում Թումանյանը։ Բանաստեղծի դուստրը՝ Նվարդը, պատմում է, թե ինչպես Վահան Տերյանը ափսոսում էր «հայրիկի կորցրած ժամանակը։ Նրան դուր չէր գալիս, որ հայրիկն էր երեկույթ կազմակերպում, բացման խոսք ասում... մանավանդ, երբ երեկույթի ժամանակ տեղից վեր էր կենում և ուշացած պատվավոր հյուրերին աթոռ առաջարկում...»[53]։

Սակայն որքան էլ ընկերներն ու մտերիմները ջանային հանուն գրականության արգելել Թումանյանին նախագահություն անել դանազան հիմնարկներում, որքան էլ ինքը՝ Թումանյանը, հաճախ մենակությունը աստվածային զգացում համարեր, որքան էլ Տերյանը զայրանար, միևնույն է, Թումանյանի պատասխանը մեկը պիտի լիներ. «Դատարկ բաներ ես ասում, Վահան, էսպես է լինելու մեր կյանքը»[54]։ Թումանյանը երբեք չէր կարող կտրվել հասարակությունից, քանի որ նա իր կյանքով ու գործունեությամբ հարազատ ժողովրդի ապրումների անդրադարձումն էր։

ОВАНЕС ТУМАНЯН И КАВКАЗСКОЕ ОБЩЕСТВО АРМЯНСКИХ ПИСАТЕЛЕЙ

СУСАННА ОВАНЕСЯН

Резюме

Кавказское общество армянских писателей, основанное в 1912 г. в Тифлисе, сыграло в дооктябрьский период огромную роль в армянской

49 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 397։

50 Նույն տեղում, էջ 387։

51 Նույն տեղում, էջ 393։

52 Նույն տեղում, էջ 397։

53 Նվարդ Թումանյան, Հուշեր և գրություներ, Երևան, 1969, էջ 115։

54 Նույն տեղում։

общественно-литературной жизни. Инициатором и бессменным руководителем этого общества был великий армянский поэт Ованес Туманян. Своей деятельностью ему удалось вызвать большой интерес к вопросам средневековой армянской литературы, истории армянской литературы, к вопросам литературы и искусства других народов

Одновременно под влиянием деятельности Кавказского общества армянских писателей в 1910-е годы в Тифлисе, Константинополе, Баку, Ереване, Александрополе, Астрахани, Новой Нахичевани (Ростов-на-Дону) и других городах были основаны литературные и национально-культурные общества и объединения. Многие из этих литературных группировок проявили желание включиться в Кавказское общество армянских писателей в качестве отдельного ответвления. Несколько позднее в разных городах создаются независимые литературные общества и группировки, которые, установив тесные контакты с Кавказским обществом армянских писателей, признают его приоритет. В деле оживления, активизации литературного движения тех лет определенную роль играли мероприятия, организуемые Кавказским обществом армянских писателей.